30 հուլիսի 2021թ. ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 024275 /16
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 30.07.2021 թվականի թիվ _____ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ 24275 վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

«Թափանցիկ բարեգործություններ» ՀԿ-ի /ՀՎՀՀ 00228212/ նախագահ Անուշ Մարտիրոսյանը /հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պ. 50/3 46, ՀԾՀ՝ 7510830346/ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում չի հրապարակել հասարակական կազմակերպության 2020 թվականի գործունեության հաշվետվությունը, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.26 հոդվածի 1-ին մասով:

Կողմին հայտնաբերելու համար ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առկա չէ առարկություն կամ բացատրություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244², 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.26 հոդվածի 1-ին մասի՝ Անուշ Մարտիրոսյանի նկատմամբ կիրառել նախազգուշացում:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.26 հոդվածի 2-րդ մասի՝ Օրենքով սահմանված կարգով նախազգուշացվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, հասարակական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պահանջը չկատարելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում՝ հասարակական կազմակերպության իրավասու պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկի չափով:

Մասնակցեցի գործի քննությանը, որոշման վերաբերյալ առարկություններ չունեմ _____
(ստորագրություն)

Ստացա որոշման պատճենը_____